

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՀՊՏՀ «Բանկային գործ և ապահովագրություն»

ամբիոնի ասպիրանտ,

ԳՊՀ դասախոս

Էլփոստ՝ nerses.nersisyan.1993n@gmail.com

Ժամանակակից փոփոխվող դարաշրջանում նոր մարտահրավերները հրամայական են դարձնում կարարելագործման գերագույն նշանդրերի հստակ ընգծումը: Գյուղատնտեսության առջև ծառացած նոր մարտահրավերները իրենց մեջ ներառում են կլիմայի փոփոխությունը, եղանակային էքսպրեմալ պայմանները, բույսերի և կենդանիների հիվանդությունները, համաճարակային բռնկումները և տնտեսական ու քաղաքական գործոնները: Այս բոլոր գործոնները կարող են բացասաբար ազդել մշակաբույսերի բերքավորության, անասնաբուծության և գյուղատնտեսական ձեռնարկությունների եկամուտների ստացման տեսանկյունից:

Գյուղատնտեսության ապահովագրությունը օգնում է մեղմել այդ ռիսկերը՝ ապահովելով ֆինանսական պաշտպանություն և փոխհատուցում ֆերմերներին անկանխատեսելի իրադարձությունների դեպքում: Ագրարային ոլորտի ապահովագրությունը կարող է ներառել բերքի ապահովագրություն, անասունների ապահովագրություն, եղանակային ռիսկերի ապահովագրություն և ապահովագրության այլ տեսակներ, որոնք հատուկ նախատեսված են գյուղատնտեսական գործունեության համար: Պեպք է նշել նաև, որ բացի վերոթվարկածներից՝ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության առկայությունը օգնում է գյուղատնտեսական ձեռնարկություններին ռիսկային որոշումներ կայացնել, ավելացնել ներդրումների մակարդակը և նպաստել գյուղատնտեսության ոլորտի կայունությանն ու զարգացմանը: Այն նաև նպաստում է գյուղական վայրերի սոցիալական կայունությանը և տնտեսական զարգացմանը՝ բարելավելով գյուղական բնակչության բարեկեցությունը: Ինչպես տեսնում ենք, այն լուծում է համալիր հիմնախնդիրների ամբողջություն:

Հոդվածում ուսումնասիրվել և վերլուծվել է մեր երկրի կարևորագույն հիմնահարցերի շարքում առանձնահատուկ տեղ զբաղեցնող՝ ներկայումս

գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ապահովագրության պիլոտային ծրագիրը: Որպես ռազմավարական նշանակության ոլորտ՝ ցանկացած հիմնախնդիր, որը կապված է ագրարային ոլորտի հետ, առավել քան արդիական է: Հոդվածում փորձ է արվել գնահատելու ագրոապահովագրության պիլոտային ծրագրի արդյունավետությունը: Հոդվածում իրականացրել ենք սեզոնային ինդեքսի հաշվարկներ, ինչպես նաև դինամիկայի շարքի վերլուծական ցուցանիշների հաշվարկներ:

Վերլուծությունների ժամանակ կիրառել ենք վիճակագրական և մաթեմատիկական, ինչպես նաև համեմատական մեթոդները, որպեսզի կարողանանք ուսումնասիրել և առավել հստակ պատկեր ստանալ ագրոապահովագրության ոլորտում պիլոտային ծրագրի իրականացման ընթացքում ձևավորված ցուցանիշների և դրանց փոփոխությունների վերաբերյալ:

Բանալի բառեր՝ գյուղատնտեսության ապահովագրություն, սեզոնային ինդեքս, պիլոտային ծրագիր, ապահովագրական հատուցում, արդյունավետություն:

Գյուղատնտեսության ապահովագրությունը կարևոր դեր է խաղում գյուղատնտեսության կայուն զարգացման գործում՝ ապահովելով պաշտպանություն ռիսկերից և այլ տարատեսակ աղետներից, որոնք ֆերմերների համար կարող են հանգեցնել եկամուտների կորստի:

Գյուղատնտեսության ոլորտը անքակտելիորեն համարվում է ռազմավարական մեծ նշանակություն ունեցող ոլորտ մեր երկրի տնտեսության համար: Այն ապահովում է պարենային անվտանգությունը, ստեղծում է աշխատատեղեր և նպաստում գյուղերի զարգացմանը: Այնուամենայնիվ, գյուղատնտեսության ոլորտը նույնպես ենթարկվում է տարբեր ռիսկերի, որոնք կարող են զգալի վնաս հասցնել ֆերմերներին և ընդհանրապես գյուղատնտեսությանը:

Անկառավարելի գործոնները, ինչպիսիք են եղանակային պայմանները (երաշտ, ջրհեղեղ, կարկուտ), միջատների և բույսերի հիվանդությունները, ինչպես նաև կլիմայի փոփոխությունը կարող են հանգեցնել բերքի զգալի կորուստների: Բացի դրանից՝ ապրանքների գների փոփոխության, փոխարժեքի տատանումների և շուկայական պայմանների հետ կապված ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ նաև գյուղատնտեսական գործունեության վրա:

Այս մարտահրավերների ներքո գյուղատնտեսության ոլորտում ապահովագրությունը դառնում է ռիսկերը կառավարելու և ֆերմերներին հնարավոր կորուստներից պաշտպանելու կարևոր գործիք:

Կառավարությունները, միջազգային կազմակերպությունները և ապահովագրական ընկերությունները ակտիվորեն աջակցում և զարգացնում են գյուղատնտեսական ապահովագրությունը՝ տրամադրելով ֆինանսական գործիքներ, մշակելով քաղաքականություն ու ծրագրեր և հեշտացնելով փոքր և միջին ֆերմերների համար ապահովագրության հասանելիությունը: Այսպիսի համագործակցության ծրագիր ներդրվեց ՀՀ-ում 2019 թվականին, բայց այնուամենայնիվ բերքի կամ մշակաբույսերի ապահովագրության գծով առաջին պայմանագիրը կնքվեց 2020 թվականի հունվարին¹: Ծրագրի մեկնարկը բավարար բուռն չստացվեց, առաջացան որոշակի խնդիրներ՝ համաճարակային իրավիճակի և պատերազմական դրության հետ կապված:² Իսկ հաջորդ տարիներին աշխուժություն նկատվեց ֆերմերների շրջանում:

Սեզոնային տատանումները բնութագրվում են հատուկ ցուցանիշներով, որոնք կոչվում են սեզոնային ինդեքսներ: Յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվում է մակարդակի միջին մեծությունը, օրինակ՝ երեք տարվա համար ($\bar{Y}_t$), այնուհետև դրանցից հաշվարկվում է ամբողջ շարքի համար միջին ամսական մակարդակ ($\bar{Y}$), և վերջում որոշվում է յուրաքանչյուր ամսվա համար միջինի տոկոսային հարաբերությունը շարքի ընդհանուր միջին ամսական մակարդակին, այսինքն՝ ³

$$I_s = \frac{\bar{Y}_t}{\bar{Y}} 100\%$$

Կազմենք աղյուսակ, որտեղ ներառված են Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական ապահովագրական շրջանակներում կատարված ապահովագրական հատուցումների եռամսյակային ցուցանիշները 2020 – 2022 թվականների կտրվածքով:

¹ Աղբյուրը՝ 17.12.2021թ.-ի գրության պատասխան 06.01/03 համարով:

² Ն. Ներսիսյան, Հայաստանում գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության «պտղաբերությունը», «Բանբեր ՀՊՏՀ», 2022թ., N5:

³ Գ. Վ. Վարդանյան, «Էկոնոմետրիկայի հիմունքները», Երևան, 2003թ. էջ 75:

Աղյուսակ 1.

**Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական ապահովագրության
հատուցումների եռամսյակային ցուցանիշները 2020 – 2022 թվականների
կտրվածով¹:**

	Ապահովագրական հատուցումների եռամսյակային ցուցանիշներ, դրամ			Սեզոնայնության եռամսյակային միջին մակարդակ
	2020	2021	2022	$\bar{Y}_i$
I եռամսյակ	0	0	0	0
II եռամսյակ	2312310	58447857	113238111	57999426
III եռամսյակ	226337108	656089137	2731281868	1204569371
IV եռամսյակ	447664688	954235627	3956081901	1785994072
	Շարքի միջին մակարդակ $\bar{Y}_i$			762140717,3

Ըստ վերոնշյալ բանաձևի՝ հաշվենք յուրաքանչյուր եռամսյակի համար սեզոնայնության ինդեքսը:

$$I_{S_1} = \frac{0}{762140717,3} 100\% = 0,0\%$$

$$I_{S_2} = \frac{57999426}{762140717,3} 100\% = 7,6\%$$

$$I_{S_3} = \frac{1204569371}{762140717,3} 100\% = 158,1\%$$

$$I_{S_4} = \frac{1785994072}{762140717,3} 100\% = 234,3\%$$

Քանի որ բոլոր ամիսների (եռամսյակների) համար սեզոնայնության միջին ինդեքսը պետք է լինի 100%, ապա ըստ ամսական տվյալների ստացված ինդեքսների գումարը հավասար է 1200-ի, իսկ ըստ չորս եռամսյակների գումարը՝ 400-ի:

$$\text{Ստուգում՝ } 0,0 + 7,6 + 158,1 + 234,3 = 400$$


¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ի պատասխան N 03/9674-2023, 12.05.2023թ.-ի գրության:

Աղյուսակ 2.

**Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական
ապահովագրությունը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան,
2020–2022թթ¹:**

	2020	2021	2022
Կնքված պայմանագրերի քանակը, հատ	3354	12207	12002
Համախառն ապահովագրավճար, մլն դրամ	353,5	1777,3	3100,5
Հատուցումների քանակը, հատ	1364	7165	10547
Հատուցումների գումարը, մլն դրամ	676,3	1668,8	6800,6

Ուսումնասիրվող տնտեսական ցուցանիշները ավելի պատկերավոր ներկայացնենք գծապատկերի միջոցով:



Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական ապահովագրությունը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան, 2020 – 2022թթ²:

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ի պատասխան N 03/9674-2023, 12.05.2023թ.-ի գրության և <https://aina.am/> կայքի հաշվետվությունների հիման վրա:

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ի պատասխան N 03/9674-2023, 12.05.2023թ.-ի գրության

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ապահովագրական համակարգի արդյունավետության գնահատման փորձ անելու համար, աղյուսակ 1-ի տվյալների համաձայն, կատարենք դինամիկայի շարքի վերլուծական ցուցանիշների հաշվարկ: Արդյունքներն արտացոլենք աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 3.

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական ապահովագրությունը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկայի վերլուծական ցուցանիշների հաշվարկը:

Տարեթիվ	Ցուցա նիշ	Բացարձակ հավելած Δ $y_{i/i-t}$		Աճի տեմպ $T_{P_{i/1}}, \%$		Հավելածի տեմպ $T_{npy_{i/1}}, \%$		1% հավելածի տեմպ $A \% $
		Բազ	Շղթ	բազ	շղթ	բազ	Շղթ	
Կնքված պայմանագրերի քանակը, հատ								
2020	3354	0	-	100	-	0	-	-
2021	12207	8853,0	8853,0	364,0	364,0	264,0	264,0	33,540
2022	12002	8648,0	-205,0	357,8	98,3	257,8	-1,7	122,070
Համախառն ապահովագրավճար, դրամ								
2020	353,5	0	-	100	-	0	-	-
2021	1777,3	1423,8	1423,8	502,8	502,8	402,8	402,8	3,535
2022	3100,5	2747,0	1323,2	877,1	174,5	777,1	74,5	17,773
Հատուցումների քանակը, հատ								
2020	1364	0	-	100	-	0	-	-
2021	7165	5801,0	5801,0	525,3	525,3	425,3	425,3	13,640
2022	10547	9183,0	3382,0	773,2	147,2	673,2	47,2	71,650
Հատուցումների գումարը, դրամ								
2020	676,3	0	-	100	-	0	-	-
2021	1668,8	992,5	992,5	246,8	246,8	146,8	146,8	6,763
2022	6800,6	6124,3	5131,8	1005,6	407,5	905,6	307,5	16,688

Դինամիկայի շարքի վերլուծական ցուցանիշների հաշվարկները վկայում են, որ 2022 թվականին 2020 թվականի համեմատ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական ապահովագրության շրջանակներում կնքված պայմանագրերի քանակը ավելացել է 8648-ով կամ շուրջ 257,8%-ով: Սակայն պետք է նկատել, որ 2021 թվականի համեմատ 2022-ին կնքված պայմանագրերի թիվը, այնուամենայնիվ, նվազել է 1,7%-ով կամ 205-ով:

Ապահովագրավճարների մասով ուսումնասիրվող ժամանակահատվածում աճը ևս ակնհայտ է: Վերջին երեք տարիների ընթացքում այն աճել է 2747 մլն դրամով՝ 353,5 մլն դրամից հասնելով 3100,5 մլն դրամի:

Ապահովագրական և՛ հատուցումների քանակի, և՛ հատուցումների գումարի մասով ունենք ակնհայտ աճ: Մասնավորապես ապահովագրական հատուցումների քանակը 2022 թվականին 2020 թվականի համեմատ ավելացել է 9183-ով և կազմել 10547: Ցուցանիշի աճը երեք տարում կազմել է 673%: Ապահովագրական հատուցումները ևս բնականաբար ավելացել են: 2021 թվականին գյուղատնտեսական ապահովագրության գծով ապահովագրական հատուցումները 2020 թվականի համեմատ աճել են 992,5 մլն դրամով կամ 146,8%-ով: 2022 թվականին 2021 թվականի համեմատ նույն ցուցանիշի աճը կազմել է 307,5%: Այս երկու ցուցանիշների աճը կապված է կնքված ապահովագրական պայմանագրերի աճի հետ:

Ուսումնասիրելով ագրոապահովագրության ոլորտը, համեմատականներ տանելով աշխարհի բազմաթիվ երկրների նույն ոլորտի զարգացման մակարդակների հետ՝ հանգում ենք այն եզրակացության, որ մեր ագրոապահովագրության ոլորտում ծառացած են որոշակի խնդիրներ, որոնց լուծումները պահանջում են ակնթարթային և հրատապ արձագանք: ՀՀ-ում իրականացվող ագրոապահովագրության պիլոտային ծրագիրը մեթոդաբանության տեսանկյունից շատ ֆերմերների, ինչու չէ, նաև ապահովագրական ընկերությունների համար իրական «գլխացավանք» է դարձել: Ֆերմերները դժգոհում են քանի որ գործող հստակ մոդել չկա վնասների հաշվարկման համար: Կանոնակարգված մոդելի բացակայությունը առաջ է բերում նաև ապահովագրական ընկերության աշխատակիցների դժգոհությունները, երբ գնահատման ամբողջ աշխատանքներից հետո ֆերմերները հրաժարվում են համաձայնության գալ վնասված բերքի գնահատականի մասով:

Դինամիկայի շարքի վերլուծական ցուցանիշների հաշվարկների և կատարված վերլուծությունների արդյունքում հստակորեն կարող ենք նշել, որ առկա վիճակագրական տվյալները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական ապահովագրության ծրագիրը ընդհանուր

առմամբ կարելի է համարել արդյունավետ: Միևնույն ժամանակ պետք է փաստենք, որ ֆերմերների շրջանում ծրագրի նկատմամբ, այնուամենայնիվ, որոշակի հիասթափություն նկատվում է: Սրա մասին է վկայում այն, որ 2022 թվականին 2021 թվականի համեմատ ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության գծով կնքված պայմանագրերի քանակը նվազել է 205-ով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վարդանյան Գ. Վ., Էկոնոմետրիկայի հիմունքները, Երևան, 2003, էջ 75:
2. Ներսիսյան Ն., Հայաստանում գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության «պտղաբերությունը», «Բանբեր ՀՊՏՀ», 2022 թ., N 5:
3. 17.12.2021 թ-ի գրության պատասխան 06.01/03 համարով:
4. N 03/9674-2023, 12.05.2023թ.-ի գրության պատասխան:
5. <https://aina.am/>:

EVALUATION OF THE EFFECTIVENESS OF THE PILOT (EXPERIMENTAL) PROGRAM IN AGRICULTURAL INSURANCE IN THE REPUBLIC OF ARMENIA

NERSISYAN NERSES

PhD Student at the Chair of Banking and Insurance at ASUE

Lecturer of Gavar State University

e-mail: nerses.nersisyan.1993n@gmail.com

In today's changing era, new challenges make it authoritative to define the ultimate benchmarks for improvement clearly. New challenges facing agriculture include climate change, weather extreme conditions, diseases of animals and plants, epidemic outbreaks, and economic and political factors. All these factors can harm crop yields, livestock production and income generation of agricultural enterprises. Agricultural insurance helps to redress those risks by providing financial protection and compensation (offset) to the farmers in case of unpredictable events. Agricultural sector insurance can include crop insurance, livestock insurance, weather risk insurance, and other types of insurance that are especially for agricultural activities. It is also necessary to mention, that besides the above-mentioned ones, the existence of insurance in the agricultural sector helps agricultural enterprises make risky decisions, increase the level of investment, and contribute to the stability and development of the agricultural sector. It also contributes to the social stability and economic development of rural places by improving the welfare of the rural population. As we can see, it solves a set of complex problems. In the article, the

insurance pilot program currently implemented in the field of agriculture, which occupies a special place among the most important issues of our country, was studied and analyzed. As an area of strategic importance, any problem related to the agricultural sector is more than ever up to date. An attempt has been done in the article to evaluate the effectiveness of the agro-insurance pilot program. In the article, we performed calculations of the seasonal index, as well as calculations of the analytical indicators of the dynamics series. During the analysis, we used statistical and mathematical, as well as comparative methods, in order to be able to study and get a clearer picture of the indicators formed during the implementation of the pilot program in the field of agro-insurance and their changes.

Keywords: Agricultural insurance, seasonal index, pilot program, insurance compensation, efficiency.

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ПИЛОТНОЙ ПРОГРАММЫ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО СТРАХОВАНИЯ В РА

НЕРСИСЯН НЕРСЕС

Аспирант кафедры банковского дела и страхования ГЭУА

Преподаватель ГГУ

электронная почта: nerses.nersisyan.1993n@gmail.com

В сегодняшнюю эпоху перемен новые вызовы требуют четкого определения конечных ориентиров улучшения. Новые проблемы, стоящие перед сельским хозяйством, включают изменение климата, экстремальные погодные условия, болезни растений и животных, вспышки эпидемий, а также экономические и политические факторы. Все эти факторы могут негативно сказаться на урожайности сельскохозяйственных культур, производстве продукции животноводства и формировании доходов сельскохозяйственных предприятий.

Сельскохозяйственное страхование помогает снизить эти риски, предоставляя фермерам финансовую защиту и компенсацию в случае непредвиденных событий. Сельскохозяйственное страхование может включать страхование урожая, страхование скота, страхование от погодных рисков и другие виды страхования, специально предназначенные для сельскохозяйственных операций. Также следует отметить, что помимо перестрахования, наличие страхования в аграрном секторе помогает сельскохозяйственным предприятиям принимать рискованные решения, повышает уровень инвестиций и способствует

стабильности и развитию аграрного сектора. Оно также способствует социальной стабильности и экономическому развитию сельских территорий за счет повышения благосостояния сельского населения и, как мы видим, решает множество сложных задач.

В статье изучена и проанализирована пилотная программа страхования, реализуемая в настоящее время в сфере сельского хозяйства, которая занимает особое место среди важнейших вопросов нашей страны. Как отрасль, имеющая стратегическое значение, любой вопрос, связанный с аграрным сектором, более чем актуален. В статье предпринята попытка оценить эффективность пилотной программы агрострахования. Выполнены расчеты сезонного индекса, а также расчеты аналитических показателей ряда динамики.

В ходе анализа нами были использованы статистические и математические, а также сравнительные методы, чтобы иметь возможность изучить и получить более четкое представление о показателях, сформированных в ходе реализации пилотной программы в сфере агрострахования и их изменениях.

Ключевые слова: *агрострахование, сезонный индекс, пилотная программа, страховое возмещение, эффективность.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 31.05.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 10.06.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: